ՕՐՀՆՅԱԼ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Ամուսնությունը ներկայացնում է Աստծուն երկրի վրա, Քրիստոսին և Եկեղեցուն, Ուխտը: Տարվա այս հատվածում շատ ընտանիքներ աշնանային հատուկ ավանդույթներ ունեն: Ո՞ր ավանդույթներն են նշանակալի քո ընտանիքի համար և ինչո՞ւ:

- In 1930, 83% of adult Americans were married. Today 49.7% are married.
- Divorce — over last 50 years the divorce is gone up 700%. One out of two couples gets divorce. 50% of all marriages getting divorce.
- "No Fault Divorce". File a paperwork, pay $137, and everyone gets their share.

  Number of divorces increased in Armenia in the first half of 2018, according to the latest figures released by the State Statistical Committee.
- Armenia — The country had a rate of 282 divorces per 1,000 marriages from January to June this year, against the 269 divorce cases of the same period of 2017.

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՄԱՏԹԵՈՍ 19.3-8

3 Եւ փարիսեցիները, մօտենալով նրան, փորձեցին և ասացին.

Արժա՞ն է արդեօք մարդիս, որ իր կինն արձակէ ամեն որևէ պատճառի համար: 4 Նա էլ պատասխանեց և ասեց նորանց. Չէ՞ք կարդացել թէ նա որ սկզբից ստեղծեց, արու և էգ ստեղծեց նորանց, և ասեց. 5 Սորա համար մարդ կթողէ հայրը և մայրը և իր կնոջը կհարի և երկուսը կլինին մէկ մարմին: 6 Որովհետև այլևս երկու չեն, այլ մէկ մարմին. արդ այն որ Աստուած միավորեց, թող մարդը չբաժանէ:

7 Նորան ասեցին. Ապա ինչո՞ւ Մովսէսը պատվիրեց մեզ, արձակման թուղթ տալ և արձակել նորան:
8 Նորանց ասեց, թէ Մովսէսը ձեր քարասրտության պատճառով ձեզ թուլլ տվեց արձակել ձեր կանանց, բայց սկզբից այդպէս չի եղել:

- **ԱՄԵՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԼԻՆՈՒՄ Է ԵՐԿՈՒՍԻՑ ՄԵԿԻ ՔԱՐԱՍՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ:**

Հով. 1:17 - Որովհետև օրէնքը Մովսէսի ձեռով տրվեց. շնորհքը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի ձեռով եղավ:

- **ԻՆՉՊԵ՞Ս ԴՈՒ ԿԱՐՃԱԳԱՆՔԵԻՐ, ԵԹԵ ԱՅԴ ՕՐՆ ԱՅՆՏԵՂ ԼԻՆԵԻՐ, ԵՐԲ ՀԻՍՈՒՍՆ ԱՅԴ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՏՎԵՑ:**

  1. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ:
  2. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻՆ և ԵԿԵՂԵՑԻՆ:
  3. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՈՒԽՏԸ:

I. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ:

Չէ՞ք կարդացել թէ նա որ սկզբից ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց նորանց, եւ ասեց.

*Ծննդ. **1:26-27** - 26 Եւ Աստուած ասեց. Մեր պատկերով և մեր նմանութեան պէս մարդ «**humankind**» շինենք, որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների, և անասունների և բոլոր երկրի վրա, և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա: 27 Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծո պատկերով ստեղծեց նորան. արու և էգ ստեղծեց նորանց:*

Երբ Աստված ամուսնությունը ստեղծեց տղամարդու ու կնոջ միջև, դա արտահայտում էր Նրա պատկերը: Նմանապես Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին էլ մեկ են. ինչպես ամուսինները, նմանապես Աստվածության երեք անձերն են մեկ: Աստված ամուսնության միջոցով արտացոլում է Իր պատկերը:

- ***Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև ծրագրված է այնպես, որ արտացոլի Աստծուն երկրի վրա: ՈՉ ԹԵ ՄԻԱՅՆ ԿԻՆԸ ԿԱՄ ԱՄՈՒՍԻՆԸ ԱՅԼ ԵՐԿՈՒՍԸ ՄԻԱՍԻՆ:***

II. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ:

- ***Ամուսնությունն արտացոլում է Քրիստոսի և Եկեղեցու փոխհարաբերությունը:***

*Եփ. **5:31-33** - Եփ. **5:28-33** - 28 Այսպէս պէտք է մարդիկ սիրեն իրենց կանանց իբրև իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում: 29 որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին: 30 Որովհետև անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից և նրա ոսկորներից: 31 Սորա համար մարդը կթողէ իր հօրը և մօրը, և իր կնկան կհարէ և երկուսը մէկ մարմին կլինին: 32 Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերեալ: 33 Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նու՛յնը արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը. և կինը վախենա «հարգի և պատվի» իր մարդուց:*

Եփեսացիների 5-րդ գլուխն ասում է, որ ամուսնությունը խորհրդապատկերում է Քրիստոսին ու Եկեղեցուն:

Ամուսիններն իրենց օրինակով պետք է աշխարհին ցույց տան, թե ինչպես է Հիսուսը վերաբերվում Իր հարսնացուին՝ Եկեղեցուն:

Կանայք իրենց օրինակով պետք է աշխարհին ցույց տան, թե ինչպես է Եկեղեցին հարգում և պատվում Քրիստոսին: Եթե մենք սա չենք ձևավորում մեր ամուսնության մեջ, ուրեմն՝ մենք ճշմարիտ կերպով չենք արտացոլում ճշմարտությունն աշխարհին:

*Ես. **54:5-8** - 5 Որովհետև քո այրը քեզ Ստեղծողն է, Զօրաց Եհովա է նորա անունը, և քո Փրկիչը Իսրայէլի Սուրբն է, նա կոչվում է բոլոր երկրի Աստուած: 6 Որովհետև Տէրը քեզ մի երեսից ձգուած և հոգով վշտացած կնոջ պէս կանչեց, և մի երիտասարդ կնոջ պէս, որ մերժուած է, ասում է քո Աստուածը: 7 Մի փոքր վայրկեան քեզ թողեցի, բայց մեծ ողորմութիւններով քեզ պիտի ժողովեմ: 8 Բարկութիւնս տաքանալով՝ մի վայրկեան ծածկեցի երեսս քեզանից, բայց հավիտենական ողորմութիւնով քեզ պիտի ողորմեմ, ասում է քո Փրկիչը՝ Եհովան:*

III. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՈՒԽՏԸ:

- *Ամուսնությունն արտացոլում է Ուխտը: – בְּרִית, běriyth, Բէռիֆ (Ադամ, Նոյ, Աբրահամ, Մովսես, Դավիթ, Հիսուս:)*

Մաղ. 2:14 - 14 Դուք ասացիք. «Ինչո՞ւ այդպէս»: Նրա համար, որ Տէրը ուխտ (վկա է) դրեց քո և քո երիտասարդութեան օրերի կնոջ միջև, որի դէմ դու անհավատարիմ ես եղել. սակայն նա քո ուխտի ամուսինն ու կինն էր: (Shame, and Blame)

- *Ի՞նչ տարբերություն կա պայմանագրի հիման վրա կայացած ամուսնության և Ուխտի հիման վրա կայացած ամուսնության միջև:*

Պայմանագիր. մենք պաշտպանում ենք մեր իրավունքները և սահմանափակում մեր պատասխանատվությունները:
Contract: We protect our rights and we limit our responsibilities.

Միայն Աստված կարող է կոտրել իր ուխտը: Արդ այն որ Աստուած միավորեց, թող մարդը չբաժանէ:

Ուխտ. մենք վայր ենք դնում մեր իրավունքները և ստանձնում ենք մեր պատասխանատվությունները:
Covenant: We give up our rights and we pick up our responsibilities.

_____, համաձա՞յն ես, որ _____ դառնա քո ամուսինը/կինը, որպեսզի ապրես նրա հետ՝ որպես քո կյանքի ընկերոջ: Համաձա՞յն ես պատվել, հարգել ու սիրել նրան այնպես, ինչպես Աստված է սովորեցնում: Համաձա՞յն ես նվիրել քո կյանքը նրան: Համաձա՞յն ես աղոթել նրա համար, չնայել ոչ ոքի և հավատարիմ լինել նրան, մինչև որ Աստված բաժանի ձեզ մահվան միջոցով:

Առողջ ամուսնության մեջ ամուսինն ու կինն աշխարհին ցույց են տալիս, թե ինչպես է Աստված Իր Ուխտը պահում:

Աստված միշտ պահում է Իր Ուխտը մեզ հետ:

Հիսուսը մեր կողմից պահեց Աստծո հետ Ուխտը, և երբ մենք հավատում ենք Հիսուսի արած գործին, մենք Աստծո հետ մտնում ենք Ուխտի մեջ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված ուզում է օրհնել ընտանիքներն ու տեսնել, որ նրանք քայլում են ազատության և առողջ փոխհարաբերությունների մեջ՝ Իր հովանու ներքո: